ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «22» մայիսի 2025թ №2705Ա

«ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգերի ցանկով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության

գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 017/S-061 N 1 հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրի, արտադրանքի/օբյեկտի նորմատիվ իրավական ակտի, ստանդարտացման փաստաթղթի նշագրի, անվանման, արտադրանքի/օբյեկտի համապատասխանության գնահատման ձևի և սխեմայի:

2. «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել մինչև հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը (2029 թվականի օգոստոսի 8), շնորհել նշանակման վկայական և նույնականացնող համար՝ Ն-02 (H-02) 2025:

3. «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակման ողջ ժամանակահատվածում ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

2025-10-01 13:10:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025 թ.
_____ ____-ի N _____-Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 607-Ն որոշում: